ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 599-Ա

ՀԱՄԱՐ 3 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, 46-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ենթակայությամբ համար 3ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Գոհար Թովմասյանի գրությունը՝ կազմակերպության աշխատակցների մոտ կորոնավիրուսային հիվանդություն հաստատվելու մասին և հիվանդության հետագա տարածումը կանխարգելելու նպատակով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն թվականի հոկտեմբերի 26-ից մինչև սույն թվականի նոյեմբերի 8-ը ժամանակավոր դադարեցնել Տաշիրի համայնքապետարանի ենթակայության համար 3 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատանքային գործունեությունը:

2. Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձը վճարել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 600-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-008-0268-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արսեն Մելոյանի (անձնական համարը՝ 25 12 783198, անձնագիր՝ FE156859 տրված՝ 380-010-ի կողմից 12.02.2016թ-ին) կողմից լիազորված անձ՝ (նոտարական ակտի կոդ՝ 595-20200309-90-4506692) Նոյեմ Անդրիասի Միրզոյանի (անձնագիր՝ AN 0348465, տրված՝ 30.01.2013-ին) դիմումը (մուտք՝ 18.10.2021-ի ՄԴ-505-21) 1989 թվականի սեպտեմբերի 30-ի Կալինինոյի քաղխորհրդի գործադիր կոմիտեի նիստի թիվ 9 արձանագրությունից քաղվածքը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի հատակագիծը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով, 50-րդ, և 60-րդ կետերը , նկատի ունենալով, որ բնակելի տան կառուցման համար օրինական հատկացված 0.06 հա և կից 0 . 01576հա հողամասերը ընդգրկված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Արսեն Ռաֆֆիի Մելոյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, 11-րդ թաղամաս, Ալաշկերտ բ/զ թիվ 1 փողոց, թիվ 1 հողամաս հասցեում 06-008-0268-0001 կադաստրային ծածկագրով 0,07576 հա բնակավայրերի բնակելի կառուապատման հողամասի նկատմամբ, որից ըստ փաստաթղթերի 0,06հա հողամասի և առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ընթացքում կադաստրային քարտեզագրման արդյունքում անշարժ գույքի նկատմամբ իրավունքը հաստատող փաստաթղթերում սեփականատերերի կողմից նշված չափից մինչև 20 տոկոսից ավելի 0,00376 հա հողատարածության նկատմամբ:

2. Ըստ չափագրման արդյունքների հողամասի 20 տոկոսը գերազանցող 0,00376 հա հողամասը ուղղակի վաճառքի կարգով օտարել Արսեն Ռաֆֆիի Մելոյանին՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի 30 տոկոսի չափով՝ 8940 (ութ հազար ինը հարյուր քառասուն) ՀՀ դրամով և կնքել առք ու վաճառքի պայմանագիր:

3.Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4.Հողամասին տրամադրել փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Ալաշկերտ բ/զ, թիվ 1 փողոց, թիվ 1 հողամաս հասցեն (փոստային դասիչ՝ 2102):

5.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հոկտեմբերի 2021 թվականի N 601-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԱՎԹԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.

«ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ջոն Պողոսյանի Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ պարբերությամբ սահմանած պահանջները խախտելով, առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի,ինքնակամ զավթել է Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող,պետական սեփականություն հանդիսացող հողամասը և չի վերացրել դրա հետևանքները, որի համար օրենքով սահմանված կարգով նախատեսված է տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով՝ 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ, ինչի կապակցությամբ Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի 15.10.2021-ի թիվ 3/1 արձանագրության հիման վրա 2021 թվականի հոկտեմբերի 15-ին «Վարչարարությանն հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետի և 34-րդ հոդվածով սահմանած կարգով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ: Ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի աշխատակիցների կողմից «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանին զգուշացվել է հողամասն ապօրինի տիրապետումից ազատելու մասին: «Վարչարարությանն հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը . Տաշիրի համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսայնը առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի,ինքնակամ զավթել է պետական սեփականություն հանդիսացոզ հողամասը : Նշված փաստական հանգամանքը հաշվի առնելով 2021

թվականի հոկտեմբերի 15-ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Տաշիրի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2021 թվականի հոկտեմբերի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանը (հիմք՝ 20.10.2021-ի փոստային անդորրագիր) : (Վարչական վարույթի լսումներն իրականացվել են պատշաճ ծանուցված «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանի բացակայությամբ):

2.Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ Սլավիկ Անախասյանի առաջատար մասնագետ Արմեն Շահբազյանի կողմից 15.10.2021-ին կազմված թիվ 3/1 արձանագրությունը և տեղազննության ակտը: Համաձայն « Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը,օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության: Հայաստանի հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարը կանխարգելում , կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերով ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր,ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 116-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ինքնակամ զբաղեցրած հողամասերը վերադարձվում են դրանց սեփականատերերին, օգտագործողների՝ առանց հողային օրենսդրությունը խախտողների կողմից այդ հողամասերի ապօրինի օգտագործման ժամանակահատվածում կատարված ծախսերի հատոցման: Տվյալ պարագայում «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանը Տաշիր համայնքի Կաթնառատ բնակավայրի վարչական տարածքում առանց համապատասխան թույլտվության և հողօգտագործման իրավունքի ինքնակամ զավթել է պետական սեփականություն հանդիսացող հողամասը և չի վերացրել դրա հետևանքները: Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ պետական և (կամ) համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելը դրա հետևանքները չվերացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Ելնելով վերոգրյալից ,հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ճարտարապետության, քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի կողմից Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերության պահանջների հատկանիշներով նախատեսված «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանի վարչական իրավախատում կատարելու հիմքով 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կազմած 3/1 արձանագրությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով, 116-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, 219.1-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, 32-րդ հոդվածի 1-ին, 2-

րդ պարբերություններով, 37-րդ, 281-րդ, 282-րդ և 283-րդ հոդվածներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածով, 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով , 53-րդ, 58-60-րդ հոդվածներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ին ենթարկել վարչական պատասխանատվության Հյասատանի Հանրապետության վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության պահանջներով նախատեսված արարքը կատարելու համար և նշանակել տուգանք 100.000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 305-րդ հոդվածի համաձայն տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում՝ՀՀ ֆինասների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275081298 հաշվարկային հաշվին:

3. Նախազգուշացնել «ԲՈՋՈՅԱՆ» ՍՊԸ-ի տնօրեն Ջոն Պողոսյանին՝ սույն որոշմամբ տուգանք նշանակվելուց հետո ապօրինի զբաղեցրած հողատարածքը չազատելու դեպքում, համաձայն «Վարչական իրավախախտումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ պարբերության,կնշանակվի տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով՝ 2 500 000(երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարի չափով:

4. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
6.Որոշումն ուժի մեջ է մտնում վարչական ակտի հասցեատիրոջն իրազեկելու օրվան հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 26
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 602-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 60-րդ կետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող Բեթղեհեմ Պողոսի Մելիքյանին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 001249 տրված՝ 30.04.1998-ին) ՀՀ Լոռու մարզ, քաղաք Տաշիր, թաղ. 2 Կիրովի փողոց, տուն 67ա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևայնան փողոց, թիվ 67/1 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2101) հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հոկտեմբերի 2021 թվականի N 603-Ա

« ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ »ՀԱՄԱՐ 4 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին մասով, 186-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետերով, 46-րդ հովածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Տաշիրի համայնքապետարանի ենթակայությամբ «Ամալյա Կարապետյանի անվան» համար 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Կարինե Շահբազյանի գրությունը՝ կազմակերպության աշխատակցների մոտ կորոնավիրուսային հիվանդություն հաստատվելու մասին և հիվանդության հետագա տարածումը կանխարգելելու նպատակով ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն թվականի հոկտեբերի 27-ից մինչև սույն թվականի նոյեմբերի 10-ը ժամանակավոր դադարեցնել Տաշիրի համայնքապետարանի ենթակայությամբ «Ամալյա Կարապետյանի անվան» համար 4 ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի աշխատանքային գործունեությունը:

2. Հարկադիր պարապուրդի ժամանակահատվածի համար նախադպրոցական ուսումնական հաստատությունների աշխատողների աշխատավարձը վճարել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 27
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2021 թվականի N 604-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՖԵՆՅԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Ֆենյա Սուքիասյան Հենրիկի»-ի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N86 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետությանկառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ.Լեռնահովիտ, 9-րդ փողոց, տուն 11 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ֆենյա Սուքիասյան Հենրիկի» հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն: 2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հոկտեմբերի 2021 թվականի N 605-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԴՈՒՄԻԿՅԱՆ ՔԵՐՈԲ ՍԵՐԳՈՅԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Քերոբ Սերգոյի»-ի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N87 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետությանկառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Կ. Դեմիրճյան փողոց, տուն 115 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Դումիկյան Քերոբ Սերգոյի» հայտը բավարարել և նրան տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի համար ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2021թ. հոկտեմբերի 28
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2021 թվականի N 606-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-024-0010-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԵՆ ՀԱՐՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Միշայի Հարոյանի դիմումը (մուտք՝ 22.10.2021, ՄԴ-516-21), ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի օգոստոսի 6-ի ԼԴ1/0635/02/21 վճիռը, «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագծերը, ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանա անհատական բանկեի տերի մասին» հայաստանի Հանրապետության օրենքի Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով 50-րդ, 60-րդ, կետերով նկատի ունենալով, որ տան կառուցապատման և սպասարկման համար օրենքով հատկացված 0,17947 հա հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժիներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով, որ շինությունները կառուցվել են 1961 և 1962 թվականներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Օրենքի ուժով ճանաչել Արմեն Միշայի Հարոյանի սեփականության իրավունքը Լոռու մարզի, համայնք Տաշիր, գյուղ Բլագոդարնոյե, 1-ին փողոց, թիվ 55 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 06-024-0006-0010) բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ օրինական հատկացված 0,17947 հա հողամասի նկատմամբ:

2. Հողամասի սահմանային չափերը որոշվում են ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

3. Ճանաչել Արմեն Միշայի Հարոյանի սեփականության իրավունքը ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի 06-024-0006-0010 կադաստրային ծածկագրով տնատիրության սպասարկման համար անհրաժեշտ 1794,7 քմ մակերեսով հողամասի վրա կառուցված բոլոր շինությունների նկատմամբ՝ համաձայն «Գուգարաց Աշխարհ» ՍՊԸ-ի կողմից կազմված շինությունների բնութագրի:

4. Տնատիրությանը տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Բլագոդարնոյե, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 3 բնակելի տուն (փոստային դասիչ 2105) փոստային հասցեն:

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 29
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հոկտեմբերի 2021 թվականի N 607-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2021 թվականի նոյեմբերի 30-ին անցկացնել մրցույթ համայքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնների համար՝

1)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝2.3-5), ժամը՝11:30:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության,քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝3.1-8), ժամը՝14:30:

2. Մրցույթն անցկացնելու նպատակով օրենքով սահմանված կարգով հրապարակել հայտարարություն և ծանուցել մրցութային հանձնաժողովի անդամներին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2021թ. հոկտեմբերի 29
ք.Տաշիր